

ՀԱՅ ԳԵՂԱՐՈՒԵՍԸ

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ՄԷՋ



Ազնուապետականներու ակումբ մը — սիրող գեղեցիկ գրքերու — արդէն քանի մը տարի է ի վեր ընկերութիւն մը կազմած է փարիզ մէջ «Հարիւր Գրասէրները» (Les Cent bibliophiles) անուան տակ, ընդ նախագահութեամբ գործուներայ և հանճարեղ իսթէն Ռոտտիկի:

Իր յանձնարարութեամբ՝ ամէն տարի լոյս կը տեսնէ պատկերազարդ հատոր մը՝ զոր կը նկարազարդէ այժմեան ամենէն ինքնատիպ և ճարտար փորագրողներէն մին. կը հրատարակուի տրպարական վայելչութեան նրբանդիւր ուշադրութեամբ: Տպագրեալ գիրքը վաճառքի չէ հանուած, և օրինակները՝ որ ինչ ինչ պատճառներու համար հարկուին աւելի չեն կրնար ըլլալ՝ նախանձայուցութեամբ՝ ընկերութեան անդամներուն համար միայն վերապահուած են:

Եթէ անհնար է չափոստալ՝ որ կատարելապէս արուեստական հրատարակութեանց վայելքը՝ անձնասիրութեամբ տակաւաթիւ անձիքներու միայն սահմանուած կը մնայ, այսուհանդերձ պէտք է խոստովանել որ, այդ բացառիկ և ծածուկ նկարազարին շնորհիւ է՝ որ կարելի կ'ըլլայ այդքան սքանչելի ճաշակով զարդարուած գրքերու հրատարակութիւնը: Այնորիկ կարող ենք բաղդատել զանիկա՝ այն քանի մը նկարազարդ հրատարակութեանց հետ՝ զորս ի լոյս կ'ընծայէին ժէզարու: Քրտնոսանքի երեւակայոտ և կախարդող զարդանկարիչներ:

Հայրիւր Գրասէրներուն համար հրատարակուած հատորներուն մէջ՝ ամենէն աւելի յիշատակի արժանի են, իբր իրենց տեսակին մէջ գլուխ գործոցներ՝ «Պոտըլէօի «Չարին ծաղիկները» զոր նկարազարդած է Աւաման Ռաքընֆօսէ և Hynsmansի «A rebours» զոր երևակայութեան զարմանալի աւելումով և չբնազդաբէտ փափկութեամբ նկարազարդած է Ռիկստ Լիքիէ:

Առոնցմէ ոչ նուազ արժէք ունի, քանի որ՝ ամսէ ի վեր լոյս տեսած կապրիէլ Մուրէլի «Le fêtes foraines»-ը թէեւ ասիակայ երեւոյթով և նկարազարդ անոնցմէ բոլորովին տարբեր է: Ասոր ճոխ և բազմառեսակ ժանտաշրային նկարները գծագրած է պոնտի վրայ Էսկար Դահին՝ հին և իրենի ծանօթը Էմիլիոնի ընթերցողներուն:

Երբ կը թղթատենք այս տպագրական տեսակէտով կատարեալ գրքին՝ երկու հարիւրէն աւելի էջերը՝ աչքերուս առջեւէն կ'անցնին շրջուն և լրծիչներ, լարախաղաց ըմբշամարտներ, ինքնատիպ տիպարներ տոնախմբար պզտի քաղաքացիներու, մարդկանց, կիներու և տղաներու փարիզեան ժողովրդին, և մարմնոյ ամենէն զանազան և բուռն շարժումներ և պրիւմներ, փարիզեան փողոցներու և հրապարակներու խորը՝ նիզակախաղեր, ըմբշամարտութեան համար պատրաստուած ցցապատէշները, լարախաղացներու և ձեռնամուռներու վրանները, չոչալաւոր

և ամենաինքնատիպ հայ արուեստագէտը, ոչ միայն բոլորովին նոր և սքանչելի ապացոյց մը տուած է մարդկային խումբերու դրից և արտայայտութիւններուն նրբագնին դիտող մ'ըլլալուն, և զանոնք վերանորոգելու կարողութեանը՝ իր փորագրողի հմուտ և դիւրաշարժ գրչով, այլ նաեւ իր կենդանութեամբ լի նկարները չափողրած և բաժանած ժամանակ՝ ապացուցած է թէ տպագրեալ էջեր ալ պոնտի համար՝ ունի արտասովոր հանճար և վառվուռն շնորհք:

(Emporium, 1908 Թիւ 158)

ՎԻԹՐՈՐԻՈՑ ՓԻԲԱ

ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐԻԵՐ

ԱՏՈՄ ԵԱՐՃԱՆԵԱՆ. — (Սիւմանթո). Հաշորդները, երրորդ շարք. Փարիզ. 1908. Հաւաքգ. տպ. գին Ամերիկայի մէջ 20 սենթ: Ռուս. 35 կոպէկ: Եւրոպայ և ուրիշ վայրեր 1 ֆր:

ՍԱՐԳԻՍ ՍԱՀԱԿԵԱՆ ԱՎԱՅԵԱՆ. — Ինչ է հարկաւոր գիւղին. Մոկուս 1908. տպ. ք. Բարսիւղարեանց. գին 1 ր:

ՀԱՅԵԱԿ ԱՐԱՄԵԱՆ. — Խմբք. Թիւրքիոյ ընդդիմադիր տարրերը. պարսկ. Ա. Ռուսուրք 1908. տպ. ք. Գ. Մազմանեան. գին 30 սենթ:

Լ. ՐԱՐԱՑԵԱՆ. — Լէօ (Առաքել Բաբայանեան) կենսագրական-գրական ակնարկ նրա 25-ամեայ յօգեւանի առթիւ: Թիֆլիզ 1908. տպ. Ա. Թառումեանի. գին 10 Կ:

ՀԱՅԿ ՏԵՐ-ԱՍՏՈՒԱԾԱՐԱՑԵԱՆ. — Նախապատմական մարդ 13 նկարով. Թիֆլիզ 1908. տպ. Օր. Ն. Աղանեանի. գին 15 Կ:

Ուրարտու և Հայերի Հայրենեան. Թիֆլիզ 1908. գին 10 Կ:

ԻՎԱՆՈՎ. — Բոտ Յայտարարութեան. Վօդը իլ 1 գործողութեամբ. (Թարգմ. Վ. Մանուէլեան). Յաւելուած «Յուշարար»ի. Թիֆլիս 1908. տպ. Մ. Տ. Ռոստիսնանցի. գին 40 Կ:

Dr. V. Torkomian. — Les derniers cas sporadiques de choléra à Constantinople. Rapport lu devant la Société Impériale de médecine. Constantinople Imprimerie Christidis: 1908.

F. Macler. — Catalogue des manuscrits arméniens et géorgiens. Paris. Imprimerie Nationale. 1908.



ՀԱՅՐԵՆԻՔ

Ե Ա Ր Ա Ք Ա Ք Ե Ր Ք

The Hairenik Pub. Co. Boston mass, 27